



Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 11

19 հունիսի 2015 թվականի

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ
(ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ
ԴՈՒՐՍԳՐՄԱՆ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման, լուծարման և օտարման կարգը՝ համաձայն հավելվածի:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Կ Ա Ր Գ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱԶՅՈՂ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ), հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և հիմնադրամի կողմից ստեղծված տնտեսական ընկերությունների գույքի դուրսգրման գործընթացը:

2. Սույն կարգի համաձայն գույքը լրիվ մաշված է համարվում, եթե.

1) այն հետագա շահագործման համար ոչ պիտանի է դարձել լրիվ ֆիզիկական մաշվածության, վթարների, շահագործման նորմալ պայմանների խախտման հետևանքով և նմանատիպ այլ պատճառներով,

2) այն պիտանի չէ հիմնադրամի ընդլայնման, վերակառուցման և տեխնիկական վերազինման նպատակով օգտագործելու համար,

3) դրա հետագա օգտագործումը, իրացումը կամ այլ օտարումը անհնար է կամ տնտեսապես աննպատակահարմար:

3. Եթե լրիվ մաշված գույքի՝ սույն կարգի 2-րդ կետի համաձայն իրացումը կամ այլ ձևով օտարումն անհնարին է կամ տնտեսապես աննպատակահարմար, ապա ենթակա է լուծարման, եթե այն.

1) իր մեջ պարունակում է այնպիսի նյութեր, դետալներ, առանձին մասեր, որոնք անհրաժեշտ են հիմնադրամի հետագա գործունեության համար,

2) պարունակում է գունավոր և թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր:

4. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված լրիվ մաշված գույքի լուծարումից առաջացած նյութերը, դետալները, առանձին մասերը, թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը մուտքագրվում են հիմնադրամի պահեստ՝ որպես առանձին գույքային միավորներ: Լուծարումից ոչ պիտանի դարձած դետալները և նյութերը հաշվառվում են որպես ջարդոն:

5. Լրիվ մաշված գույքի դուրսգրման, լուծարման և օտարման նպատակով.

1) Հիմնադրամի ղեկավարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում է գունավոր և թանկարժեք մետաղների պարունակությունն ուսումնասիրող մասնագետ:

2) Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար, անհրաժեշտության դեպքում, հիմնադրամի ղեկավարը, պայմանագրային հիմունքներով կարող է ընդգրկել համապատասխան այլ մասնագետների:

3) Հիմնադրամն իր հաշվապահական հաշվեկշռից լրիվ մաշված գույքը կարող է դուրս գրել միայն ամորտիզացիայի ժամկետը լրանալու դեպքում՝ բացառությամբ այն գույքի, որը շահագործման համար ոչ պիտանի է դարձել վթարի պատճառով: Մնացած դեպքերում դրանք դուրս են գրվում հոգաբարձուների խորհրդի թույլտվության առկայության դեպքում:

4) Հանձնաժողովի կողմից գույքն ուսումնասիրելուց հետո կազմվում է եզրակացություն՝ տվյալ գույքը հետագա շահագործման համար ոչ պիտանի փաստը արձանագրելու, կամ հետագա վերականգնման աննպատակահարմարության վերաբերյալ՝ նշելով լրիվ մաշված գույքի

քի լուծարման կամ դուրսգրման հիմքերը (մաշվածություն, վերակառուցում, շահագործման նորմալ պայմանների խախտում, վթար և այլն):

5) Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման մասին հանձնաժողովի ակտը ստորագրվում է հանձնաժողովի անդամների կողմից և հաստատվում հիմնադրամի ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

6) Հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում լրիվ մաշված գույքի ժամկետից շուտ շահագործումից դուրս գալու համար մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ, ներկայացնում առաջարկություններ հիմնադրամի ղեկավարությանը՝ մեղավոր անձանց օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

7) Վթարի հետևանքով հիմնադրամի հաշվեկշռից գույքի լուծարման կամ դուրսգրման դեպքում ակտին կցվում է վթարի մասին ակտի պատճենը:

8) Եթե գույքը ենթակա է լուծարման, ապա առաջացած նյութերի, դետալների, առանձին մասերի, գունավոր և թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի քաշի և (կամ) քանակի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմվում է ակտ և մուտքագրվում պահեստ:

9) Եթե գույքը ենթակա է դուրսգրման, ապա անկախ գնահատողի կողմից գնահատվում է դուրսգրման ենթակա գույքը այդ պահի շուկայական արժեքով, որի վերաբերյալ կազմվում է հաշվետվություն:

6. Գույքի գնահատման վերաբերյալ հաշվետվությունը պետք է պարունակի.

1) գնահատման գործընթացի նկարագրությունը,

2) գույքի նկարագիրը,

3) գնահատման մեթոդաբանությունը,

4) գույքի ցանկը,

5) յուրաքանչյուր գույքային միավորի՝ այդ պահի շուկայական արժեքը, իսկ արժեք չունե՛նալու դեպքում արժեքը նշվում է 0 (զրո),

6) տեղեկատվության աղբյուրները,

7) պատասխանատվությունը,

8) գույքի լուսանկարները,

9) անկախ գնահատողի որակավորման վկայականը:

7. Հաշվետվությունը հիմնադրամի կողմից ընդունվելուց հետո ենթակա է պարտադիր հրապարակման հիմնադրամի պաշտոնական կայքում: Հաշվետվությամբ սահմանված գույքի շուկայական արժեքները գործում են սահմանվելուց հետո 12 (տասներկու) ամսվա ընթացքում: Տասներկուամսյա ժամկետից հետո մնացորդային գույքը ենթակա է նորից վերագնահատման:

8. Դուրսգրման ենթակա այն գույքը, որի համար շուկայական արժեք չի սահմանվել, կամ դրա արժեքը 0 (զրո) է, ապա հանձնաժողովի կողմից կազմվում է ակտ և դուրս բերվում հիմնադրամի տարածքից, որի համար կնքվում է համապատասխան ծառայությունը կազմակերպողի հետ պայմանագիր:

9. Դուրսգրման ենթակա այն գույքը, որի համար շուկայական արժեք է սահմանվել, ենթակա է հիմնադրամի կողմից օտարման, իսկ եկամուտը՝ մուտքագրման հիմնադրամի բանկային հաշվեհամարին: Ստացված միջոցները տնօրինվում են հիմնադրամի կողմից:

10. Մինչև լուծարման կամ դուրսգրման ակտի հաստատումը դուրս գրվող լրիվ մաշված գույքի քանդում և ապատեղակայում չի թույլատրվում:

11. Լրիվ մաշված գույքի առանձին տեսակների համար կարող է սահմանվել լրիվ մաշված գույքի դուրսգրման այլ կարգ՝ հաշվի առնելով հիմնադրամի կողմից ներկայացված առաջարկությունները և հիմնավորումները:

12. Սույն կարգով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: